Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Yulenkampf puh

Pilpi/m 1925

353
4-21

17 MAY 2013

1 MAR 2

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

353
4-21

Վ. Ս. Խ. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԹԵՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14673

8892

ՀԱՅ.ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Պետական Գրադարան
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Մասնաճյուղ
Ա. ՄԱՍԱԼԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏ. ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ. Ն. Գ. Ժ. Կ.

ԹԻՖԼԻՍ—1925

Գ.Ա. 207

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում СССР
им. А. Мясниняна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4-я типография Полиграфтреста ВСНХ Грузии.

Главлит 2009. Тираж 500.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ԹԵՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I.

Ընդհանուր հիմունքներ։

1. Թեմական Խորհուրդը և Թեմական Գործադիր Կոմիտեն, հանդիսանալով Թեմի սահմաններում իշխանության գլխավոր մարմիններ, նպատակ ունեն՝ բարձրացնել գյուղացիական տնտեսությունը, պայքարել ագիտության, խավարամտության, հիվանդությունների և գյուղական կյանքի այլ պակասությունների դեմ, բանվորների և գյուղացիների դաշինքի հիման վրա պաշտպանել աշխատավոր ազգաբնակչության իրավունքները, ճշտագույն և լիակատար կերպով իրագործել բանվորա-գյուղացիական կառավարության որենքները, վորոնք նպատակ ունեն բարելավելու աշխատավորների կյանքը, լայնապես գրավելու գյուղացիներին և դեղջկուհիներին պետությունը կառավարելու և պետական ապարատը բարելավելու գործի մեջ։

Սույն նպատակները իրագործելու համար Թեմական Խորհուրդները և Թեմական Գործադիր Կոմիտեները կազմակերպվում են հետևյալ հիմունքներով։

ԳԼՈՒԽ II.

Թեմական Խորհուրդների մասին

ՀԱՏՎԱԾ I.

Թեմական Խորհուրդների իրավունքները յեվ պարտականությունները։

2. Թեմական Խորհուրդը քննում և մշակում է տվյալ Թեմի կյանքի կազմակերպության, կառավարությանը և տնտեսությանն վերաբերող բոլոր հարցերը։

3. Իր իրավունքները իրագործելու և իրեն հանձնարարած պարտականությունները կատարելու համար Թեմական Խորհուրդը.

ա) պաշտպանում է Թեմի տերրիտորիայի վրա ապրող գյուղացիների և գեղջկուհիների, բանվորների և բանվորուհիների, վարձկանների ու վարձկանուհիների իրավունքները.

բ) հոգս է քաշում Թեմի ամբողջ աշխատավոր ազգաբնակչության կուլտուր-տնտեսական կենցաղի մասին.

գ) աջակցում է աշխատավոր ազգաբնակության ինքնօգնության կազմակերպման և կոոպերատիվներ հիմնելու գործում.

դ) վճռական պայքար է մղում խավարամտության, տգիտության, կոպտության, ժողովրդական գույքի հափշտակության, կաշառակերության, սորկացուցիչ գործարքների և որենքի այլ խախտումների դեմ.

յե) հսկում է որենքների ի կատար ածման և կատարում է բանվորա-գյուղացիական կառավարության վերադաս մարմինների կարգադրությունները.

զ) քննում է տեղական Թեմական բյուջեն.

ե) քննում է Թեմական Գործադիր Կոմիտեյի գործունեությունը և Թեմական բյուջեն ի կատար ածելու մասին հաշիվը.

ը) միավորում է Թեմի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր խորհրդային կազմակերպությունների գործունեությունը.

թ) լսում և քննում է այնպիսի պետական և հասարակական հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեությանը վերաբերող հաշիվները, որոնք գտնվում են Թեմի տերրիտորիայի վրա և հաշվետու յեն իշխանության գավառական և վերադաս մարմիններին.

ժ) թե իր սեփական նախաձեռնությամբ և թե Վերադաս Խորհուրդների Համագումարների և Գործադիր Կոմիտեների առաջարկությամբ քննում է համապետական և գավառական նշանակություն ունեցող հարցերը, ուղղելով սույն հարցերին վերաբերող միջնորդությունները և առաջարկները իշխանության վերադաս մարմինների հաստատությանը.

ի) իր միջից ընտրում է Թեմական Գործադիր Կոմիտե, նույպես և Խորհուրդների գավառային Համագումարի պատվիրակներ։

4. Որպես զի գյուղացիները և գեղջկուհիները կարողանան մասնակցել գյուղի կառավարության գործերում, Թեմական Խորհուրդը միջոցներ է ձեռք առնում գրավելու ազգաբնակությունը գեպի տեղական կյանքի շինարարական գործը։

5, Սույն նպատակներին հասնելու համար Թեմական Խորհուրդը՝

ա) գումարում է քաղաքացիների ընդհանուր ժողովներ.

բ) հայտարարում ու բացատրում է բանվորա-գյուղացիական կառավարության որենքները և իշխանության կենտրոնական և տեղական մարմինների կարգադրությունները.

գ) անհրաժեշտ դեպքերում կազմակերպում է հանձնաժողովներ և տալիս է զանազան հանձնարարություններ առանձին քաղաքացիներին և քաղաքացիների խմբակներին.

դ) աջակցում է կոոպերատիվ և քաղաքացիների այնպիսի այլ կազմակերպությունների հիմնելուն, որոնց նպատակն է բարելավել գյուղացիական կյանքի և գյուղատնտեսության պայմանները.

յե) կատարում է քաղաքացիների ընդհանուր ժողովների բոլոր որինական վորոշումները.

զ) անհրաժեշտ դեպքերում ներկայացնում է բարձր ատյաններին քաղաքացիների ընդհանուր ժողովների բոլոր վորոշումները, նրանց ցանկությունները և միջնորդությունները։

6. Անհրաժեշտ դեպքերում Թեմական Խորհուրդը վորոշումներ և կարգադրություններ է անում սույն կանոնադրության 3-րդ և 5-րդ հոդվածներում, նույնպես IV գլխի II հատվածում հիշատակած բոլոր հարցերի վերաբերյալ։

7, Թեմական Խորհուրդը առանձին որենքով սահմանած կարգով և նրա սահմաններում Թեմի տերրիտորիայի համար հրատարակում է պարտադիր վորոշումներ։

8. Գործող որենքներին չհակասող Թեմական Խորհրդի բոլոր վորոշումները պարտադիր են նրա տերրիտորիայի սահմաններում։

9. Թեմական Խորհուրդը հաշվետու է համապատասխան գավառական Գործադիր Կոմիտեյի առաջ։

Հ Ա Տ Վ Ա Ծ II.

Թեմական Խորհուրդների կազմակերպությունը։

10. Թեմական Խորհուրդներին ընտրում է Թեմի ազգաբնակությունը, ազգաբնակության յուրաքանչյուր 100 հոգին մի պատվիրակ։

11. Թեմական Խորհուրդների ընտրություններին մասնակցում են Վ.Ս.Խ.Հ սահմանադրության համաձայն ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները. ընտրությունները կատարվում են «բանվորական, գյուղացիական և կարմիր-բանակայինների պատվիրակների Խորհուրդների, Խորհուրդների Համագումարների և Գործադիր Կոմիտեների ընտրությունների մասին» Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրահանգի մասին։

12. Թեմական խորհուրդները ընտրվում են մի տարի ժամանակով։

13. Թեմական Խորհուրդի նիստերը գումարում է Թեմական Գործադիր Կոմիտեն առնվազն ամիսը մի անգամ. Թեմական Խորհուրդի արտակարգ նիստերը կարիքի համեմատ գումարում է Թեմական Գործադիր Կոմիտեն, թե իր նախաձեռնությամբ, և թե իշխանության վերադաս մարմինների առաջարկությամբ կամ Թեմական Խորհրդի կազմի մի յերրորդականի պահանջմամբ։

Խորհուրդի բոլոր նիստերի համար կազմվում է պատշաճ արձանագրություն։

14. Թեմական Խորհուրդի նիստը որինական է համարվում, յեթե ներկա յեն Խորհուրդի անդամների ամբողջ թվի կեսը։

Խորհուրդի նիստերին բոլոր հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

15. Թեմական Խորհուրդների նիստերին խորհրդակցական ձայնով կարող են մասնակցել տեղական արհեստակցական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, Թեմական խորհուրդում ներկայացուցիչ չունեցող գյուղերի լիազորները, կանանց ներկայացուցչական ժողովների ներկայացուցիչները, գյուղի պաշտոնատար անձինք (բժիշկները, գյուղատնտեսները, ուսուցիչները, հողաշինարարները և այլն), նույնպես և տվյալ Թեմի ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները։

ՀԱՏՎԱԾ III.

Թեմական Խորհուրդների սեկցիաները։

16. Թեմական Խորհուրդների իրավասությանը յենթակա հարցերը բազմակողմանի և կանոնավոր վճռելու համար, Խորհուրդները աշխատանքի յուրաքանչյուր հիմնական ճյուղի համար ընտրում են մշտական սեկցիաներ (հանձնաժողովներ)։

17. Թեմական Խորհուրդի սեկցիաները հետևյալներն են.

1) Գյուղատնտեսական, վորի իրավասությունն է՝ ա) աջակցել գյուղատնտեսությունը վարելու ձևերի բարելավմանը, բ) աջակցել կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանը, գ) աջակցել վարձու, բեղմնավորման, անասնաբուժական, գյուղատնտեսական և այլ կայանների կազմակերպմանը, դ) աջակցել Թեմիում հողաշինարարության իրագործմանը, նույնպես և ցանքսի և սերմնավորման կամպանիա վարելուն և քննել այն հարցերը, վոր վերաբերում են տեղական նշանակություն ունեցող անտառների ֆոնդից գյուղացիներին փայտեղեն կանոնավոր բաց թողնելուն, նույնպես մշակել գյուղատնտեսության և անասնապահության զարգացման և բարելավման հետ կապված այլ հարցերը։

2) Կուլտուր-կրթական, վորի իրավասությունն է. ա) մշակել Թեմիում կուլտուր-կրթական աշխատանքի զարգացման հետ կապված հարցերը. բ) աջակցել ապահովելու ուսումնարանները անհրաժեշտ ուսումնարական պարագաներով ու ինվենտարով. գ) աջակցել ուսումնարաններ, դասընթացքներ, զրաղարաններ, խրճիթ-ընթերցարաններ, մանկական տներ և նման հաստատություններ հիմնելու և սույն հիմարկություններում աշխատանքը կանոնավոր դնելու գործում։

3) Բժշկա-սանիտարական, վորի իրավասությունն է. ա) աջակցել հիմնելու հիվանդանոցներ, ամբուլատորիաներ, բժշկական և ֆելդշերական կայաններ և բժշկա-սանիտարական այլ հիմնարկություններ. բ) իրագործելով բժշկա-սանիտարական բոլոր տեսակի միջոցները, պայքարել վարակիչ հիվանդությունների դեմ. գ) ձեռք առնել միջոցներ տարածելու բժշկա-սանիտարական գիտելիքներ, դ) կազմակերպել և ղեկավարել առողջապահության բճիճները։

4) Ֆինանսային-հարկային, վորի իրավասությունն է. ա) քննել Թեմական բյուջեն կազմելու և իրագործելու հետ կապված հարցերը. բ) աջակցել հարկ ժողովելու և հարկային կամպանյաներ վարելու գործում. գ) աջակցել շինությունների, ցանքսերի, անասունների և այլ գույքերի ապահովագրության զարգացմանը։

5) Ճանապարհների յեվ կամուրջների, վորի իրավասությունն է. աջակցել ճանապարհներ, լաստանավեր, կամուրջներ և նման շինություններ կառուցանելու և նորոգելու գործում։

6) Շինարարության յեվ բարեկարգության, վորի իրավասու-

թյունն է. ա) աջակցել զարգացնելու Թեմիի արդյունաբերական ձեռնարկությունները և տնայնագործությունը. բ) աջակցել կազմակերպելու հանրային ոգտագործման ձեռնարկություններ և հիմնարկներ (ջրմուղ, էլեկտրոֆիկացիա և այլն). գ) աջակցել կազմակերպելու հակահրդեհային հիմնարկներ։

7) Կոոպերատիվային, որի իրավասությունն է. ա) աջակցել կազմակերպելու և զարգացնելու Թեմիում բոլոր տեսակի կոոպերացիաներ (սպառողական, գյուղատնտեսական, կուլտուր-արդյունաբերական, մելիորիացիայի և այլն). բ) աջակցել կազմակերպելու կոոպերատիվային ձեռնարկություններ (ջրաղացներ, արհեստանոցներ, դարբնանոցներ, ճաշարաններ և այլն). գ) լսել կոոպերացիայի ղեկավարների զեկուցումները և այս առթիվ հաղորդել իր յեզրակացությունը Թեմական Խորհրդին։

Ծանոթություն 1.—Սույն հոդվածում մատնանշած սեկցիաները Թեմական Խորհուրդը հիմնում է անհրաժեշտության չափով։ Բացի հիշածներից Թեմական Խորհուրդը կարող է կազմել և այլ հանձնաժողովներ, նույնպես և մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց իրավասության սահմանները որոշվում է Թեմական Խորհրդի համապատասխան որոշումներով։

Ծանոթություն 2.—Թեմական Խորհուրդի սեկցիաները կազմվում են այնպիսի հաշվով, որ յուրաքանչյուր սեկցիայի մեջ ըստ կարելույն մտնեն բոլոր գյուղերի ներկայացուցիչները։

18. Թեմական Խորհուրդը ընտրում է Սեկցիայի անդամներին Խորհրդի անդամներից։ Բացի դրանից Թեմական Խորհուրդը Սեկցիաներում մասնակցելու համար կարող է ընտրել տեղական հասարակական և արհեստակցական կազմակերպությունների անդամներին, կուլտուր-կրթական և տնտեսական հիմնարկությունների մշակներին, կանանց ժողովի ներկայացուցիչներին և ընտրական իրավունք վայելող բոլոր մյուս քաղաքացիներին։

Ծանոթություն։ Թեմական Խորհուրդը պետք է գրավի աշխատանքի ըստ կարելույն Խորհրդի բոլոր անդամներին։

19. Սեկցիաները կարող են հրավիրել իրենց նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով այս կամ այն հարցի վերաբերյալ տեղյակ անձանց։

20. Սեկցիայի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվում է Թեմական Խորհրդի Նախագահությանը։ Յուրաքանչյուր Սեկցիայի աշխատանքները ղեկավարում է նրա նախագահը, որին ընտրում է Սեկցիան Սեկցիայի կազմի մեջ մտնող Խորհրդի անդամներից։

21. Սեկցիաները իրենց հանձնարարած նպատակները իրագործելու համար.

ա) քննում են Թեմական Խորհրդի ընթացիկ աշխատանքի վերաբերյալ հարցերը, լսում են Գործադիր Կոմիտեի անդամների բացատրությունները, նույնպես Թեմական հիմնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների զեկուցումները և քննած հարցերի վերաբերյալ մշակում են գործնական առաջարկներ.

բ) անմիջապես ծանոթանում են Թեմական Խորհրդի և Թեմական Գործադիր Կոմիտեի տնորինության տակ գտնվող հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատանքի հետ.

գ) անհրաժեշտության դեպքում իրենց կազմից իրենց աշխատանքի այս կամ այն առանձին հարցի համար ընտրում են ժամանակավոր հանձնաժողովներ.

22. Սեկցիաները բոլոր քննած հարցերի մասին անում են իրենց յեզրակացությունները, որը ներկայացնում են Թեմական Խորհրդին կամ Թեմական Գործադիր Կոմիտեին։

23. Սեկցիաները աջակցություն են ցույց տալիս ի կատար ածելու յուրաքանչյուր Սեկցիային յենթակա հարցերի վերաբերյալ Թեմական Խորհրդի և Թեմական Գործադիր Կոմիտեի որոշումները և կարգադրությունները։

24. Սեկցիաները մշակում են իրենց գործունեության ծրագիրը և ներկայացնում են Թեմական Խորհրդի հաստատությանը։

Սեկցիաների նիստերի ժամկետները և աշխատանքի կարգերը որոշում են իրենք Սեկցիաները։

Ծանոթություն։ Սեկցիաները իրենց աշխատանքի համար ոգտվում են Թեմական Խորհրդի տեխնիկական ապարատով։

25. Սեկցիայի անդամները պարտավոր են կանոնավոր կերպով հաճախել Սեկցիայի նիստերը և կատարել Սեկցիայի բոլոր հանձնարարությունները։

ՀԱՏՎԱԾ IV.

Թեմական Խորհրդի անդամների իրավունքները յեվ պարտականությունները։

26. Թեմական Խորհրդի անդամները, բացի Խորհրդի մեջ ունեցած իրենց մշտական աշխատանքից, պետք է մասնակցեն Թեմական Խորհրդի կազմած սեկցիաներում և հանձնաժողովներում և կատարեն Թեմական Խորհրդի առանձին հանձնարարությունները։

27. Անգործության, իշխանությունն ի չար գործ դնելու կամ իշխանազանցության, ազգաբնակության հետ կոպիտ վարվելու, անհնազանդության, իշխանության վերադաս մարմինների վորոշումները անճիշտ կատարելու, նույնպես և Խորհրդի կամ Սեկցիայի հանձնարարությունները չկատարելու կամ Խորհրդի նիստերը սիստեմատիկաբար չհաճախելու համար, յեթե մատնանշած գործողությունները չեն պարունակում իրենց մեջ քրեական արարքի հատկանիշներ, Թեմական Խորհուրդը Խորհրդի անդամների, վորոնց թվում և Նախագահության անդամների նկատմամբ գործադրում է կարգապահական հետևյալ միջոցները՝ նախազգուշացում է, հանդիմանում է, հաղորդում է ընտրողներին և զրկում է պատվիրակի լիազորությունից։

28. Թեմական Խորհուրդը կարող է զրկել Խորհրդի անդամին պատվիրակի լիազորություններից և այն դեպքում, յերբ նա քրեական կարգով պատժվող արարք է գործում, անկախ այն հանգամանքից, թե հարուցված է նրա դեմ, քրեական հետապնդում թե վոչ։

Ծանոթություն։ Պատվիրակի լիազորությունից զրկելու մասին իր վորոշումը Թեմական Խորհուրդը պետք է ներկայացնի Գավառային Գործադիր Կոմիտեյի հաստատությանը։

29. Թեմական Խորհրդի անդամները առանց Թեմական Խորհրդի գիտության և համաձայնության իրավունք չունին թողնելու իրենց պաշտոնը և աշխատանքը։

30. Թեմական Խորհրդի անդամները իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Թեմի տերիտորիային վրա գործող և Թեմական Խորհրդին յենթակա բոլոր հիմնարկությունների և կազմակերպությունների նիստերին և խորհրդակցություններին։

Ծանոթություն։ Սույն հոդվածը չի վերաբերում դատաստանական մարմինների այնպիսի նիստերին և խորհրդակցություններին, ուր վճռվում են քաղաքացիական կամ քրեական գործեր։

ՀԱՏՎԱԾ V

Թեմական Խորհրդի յեվ պատվիրակների ընտրողներին հաշիվ տալու կարգի մասին։

31. Թեմական Խորհուրդը կանոնավոր կերպով, առնվազն յերեք ամիսը մի անգամ, պարտավոր է իր գործունեության և իրեն հանձնարարած պարտականությունները կատարելու մասին հաշիվ տալ ընտրողներին։

Խորհրդի յուրաքանչյուր անդամը ընտրողների պահանջմամբ Խորհուրդում ունեցած իր գործունեության մասին պարտավոր է հաշիվ տալ նրանց։

32. Խորհրդի կամ առանձին պատվիրակների հաշիվները զեկուցանվում են ընտրողների ընդհանուր ժողովին (գլ III)։

33. Հաշվետու զեկուցումը քննվում է ընդհանուր ժողովի կողմից, վոր պետք է վորոշում հանի, վորի մեջ պետք է գնահատվի Թեմական Խորհրդի, նույնպես և տվյալ պատվիրակի (այն դեպքում, յերբ հաշվետվությունը վերաբերում է պատվիրակի գործունեությանը) աշխատանքի մասին։

34) Այն դեպքում, յերբ ընդհանուր ժողովը համարում է ներկայացրած հաշիվը անբավարար, ընդհանուր ժողովի վորոշման մեջ պետք է հիշատակվեն.

ա) Խորհրդի աշխատանքի պակասությունները.

բ) պատվիրակի աշխատանքի պակասորդները.

գ) պատվիրակին Խորհրդից հետս կոչելու վորոշումը։

35. Ընդհանուր ժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշած լինի՝ տվյալ ընտրական միության ընտրողների ընդհանուր թիվը, ընդհանուր ժողովում ներկա յեղողների թիվը, նախագահության կազմը, հաշվետու զեկուցման կարճ բովանդակությունը, զեկուցման առիթով արած առաջարկները, ընդունված վորոշումները և վորոշման թեր և դեմ քվեարկողների թիվը։

36. Պատվիրակին հետս կոչելու վորոշումը զորություն ունի այն դեպքում, յերբ սույն առաջարկը ընդունելու համար քվեարկել է տվյալ ընտրական միության ընտրողների ընդհանուր թվի մի յերրորդականը։

Ծանոթություն.—Խորհրդից պատվիրակին հետս կոչելու դեպքում, Խորհուրդը ընդհանուր կարգով նշանակում է նոր ընտրություններ։

ԳԼՈՒԽ III.

Քաղաքացիների ընդհանուր ժողովները։

37. Քաղաքացիների ընդհանուր ժողովները (համայնական ժողովները) ըստ կարիքի գումարում է Թեմիական Խորհուրդը կամ Թեմիական Գործադիր Կոմիտեն։

38. Ընդհանուր ժողովներին իրավունք ունեն մասնակցելու Թեմիի կամ գյուղի տերրիտորիայի վրա ապրող և ընտրական իրավունք վայելող (հոդ. 11) բոլոր քաղաքացիները։

39. Թեմիական Խորհուրդը պետք է կանխապես մշակե այն բոլոր հարցեր, վոր դնվելու յեն քաղաքացիների ընդհանուր ժողովի քննությանը։ Ընդհանուր ժողովի որակարգը պետք է հայտարարվի քաղաքացիներին բանավոր կերպով, նույնպես և տեսանելի տեղերում ցուցադրելով ընդհանուր ժողովից առնվազն յերեք որ առաջ։

40. Քաղաքացիների ժողովի ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվում է Թեմիական Գործադիր Կոմիտեյին։

41. Քաղաքացիների ընդհանուր ժողովը կառավարելու համար ժողովը ներկա յեղողներից ընտրում է նախագահություն։ Ընդհանուր ժողովների մասին կազմվում է արձանագրություն, վորը հանձնվում է Թեմիական Խորհրդին։

42 Թեմիական Խորհուրդը քաղաքացիների ընդհանուր ժողովի քննությանը կարող է դնել բոլոր այլ հարցերը, վոր յենթակա յեն Թեմիական Խորհրդին, բայց գլխավորապես նա դնում է բարեկարգության և գյուղական ներքին կյանքի բարելավման վերաբերյալ հարցերը։

43. Ընդհանուր ժողովների վորոշումները իրագործում է Թեմիական Խորհուրդը։

Յեթե Թեմիական Խորհուրդը համաձայն չե ընդհանուր ժողովի վոր և է վորոշման հետ, սույն վորոշումը նա ներկայացնում է

Գավառական Գործադիր Կոմիտեյին, վորը և լուծում է ընդհանուր ժողովի վորոշումը իրագործելու հարցը։

44. Ընդհանուր ժողովներին հրավիրվում են Թեմիի մեջ գտնվող բոլոր գյուղերի բնակիչները միասին, բայց Թեմիական Խորհրդի վորոշումներով ընդհանուր ժողովները կարող են տեղի ունենալ առանձին գյուղերում, իսկ յեթե գյուղը խոշոր է, գյուղի առանձին մասերում։

45. Ընդհանուր ժողովները որինական են համարվում, յեթե ներկա յե ընտրական իրավունք վայելող քաղաքացիների առնվազն մի յերրորդը։

Հարցերը ընդհանուր ժողովներում վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

ԳԼՈՒԽ IV.

Թեմիական Գործադիր Կոմիտեների մասին։

ՀՈՍՎԱԾ I.

Թեմիական Գործադիր Կոմիտեների գործունեության հիմնական նպատակները յեվ իրավունքները ու պարտականությունները։

46. Թեմիական Գործադիր Կոմիտեն ընտրվում է Թեմիական Խորհրդի կողմից ընթացիկ աշխատանքի և Թեմիական Խորհրդի վորոշումները և կարգադրությունները ի կատար ածելու համար, նույնպես և իշխանության վերադաս մարմինների դեկրետները, վորոշումները և կարգադրությունները իրագործելու համար։

47. Թեմիական Գործադիր Կոմիտեն միաժամանակ Խորհրդի նախագահությունն է։

48. Իրենց հանձնարարած նպատակները իրագործելու համար Թեմիական Գործադիր Կոմիտեները իրավունք ունեն.

ա) անմիջապես հարաբերություն ունենալ գավառական հիմնարկությունների հետ այն միջոցների մասին, վոր վերջինները ձեռնարկում են Թեմիի նկատմամբ և Գավառական Գործկոմի միջոցով հարաբերություն ունենալ իշխանության կենտրոնական մարմինների հետ.

բ) ուղարկել Գավառական Գործադիր Կոմիտեյի և իշխանության գավառական և այլ մարմինների նիստերին, նույնպես իշխանության կենտրոնական մարմինների խորհրդակցություններին զեկուցանողներ Թեմիի գործերի մասին.

գ) Գավառական Գործադիր Կոմիտեյի միջոցով առաջադրություններ անել վերացնելու կամ փոփոխելու իշխանության վերադաս մարմինների այնպիսի վորոշումները, վորոնք տեղական պայմանների համաձայն աննպատակահարմար են համարվում.

դ) Իրագործել ընդհանուր ղեկավարություն, ուղղություն տալով Թեմիի դպրոցների, հիվանդանոցների, ամբուլատորիաների, գյուղատնտեսական, անասնաբուժական և բեղմնավորման կայանների գործունեությանը, բացի ցուցադրական հիմնարկություններից, նույնպես և բացի այնպիսիներից, վորոնք Գավառական Գործադիր Կոմիտեյի կամ վերադաս մարմինների հատուկ վորոշումներով կարող են հանվել Թեմիական Գործադիր Կոմիտեների տնորինությունից.

յե) հաշիվ պահանջել անտառապահության մարմիններից և վերահսկողություն ունենալ վերջինների վերաբերյալ.

զ) համապատասխան գոյություն ունեցող որենքների համաձայնեցնել Գավառական Գործադիր Կոմիտեյի բաժինների ներկայացուցիչների գործունեությունը.

ե) նշանակել Թեմիի պաշտոնատար անձանց և պատճառաբանած մերժում ներկայացնել այն աշխատավորների վերաբերյալ, վոր Թեմիի համար նշանակում է Գավառական Գործադիր Կոմիտեն կամ այլ մարմինները.

ը) վարչական կարգով տուժել Թեմիական Խորհրդի կողմից Գավգործկոմի հաստատությամբ հրատարակված պարտադիր վորոշումների խախտումի համար, նույնպես և այն պարտադիր վորոշումների խախտումների համար, վոր հրատարակել են Գավառական Գործադիր Կոմիտեները կամ Կենտրոնական մարմինները, յեթե Թեմիական Խորհրդի սույն իրավունքը նախատեսված է հիշած պարտադիր վորոշումներում.

թ) կարգապահական յեղանակով, պահպանելով սակայն աշխատանքի մասին որենքները, Թեմիական Գործադիր Կոմիտեյին յենթակա պաշտոնատար անձանց վերաբերյալ գործադրել հետևյալ միջոցները՝ նկատողություն անել, նախազգուշացնել, հանդիմանել, մինչև յերեք որ կալանավորել, ավելի ստոր պաշտոնի փոխադրել, և ծառայությունից արձակել։

49. Թեմիական Գործադիր Կոմիտեն պարտավոր է կանոնավոր կերպով, առնվազն յերկու ամիսը մի անգամ, իր գործունեության մասին հաշիվ տալ Թեմիական Խորհրդին։

50. Թեմիական Գործադիր Կոմիտեները, վայելելով իրավական անձի իրավունքներ, կարող են հանձն առնել պարտավորություններ, մտնել տնտեսա-պայմանագրական հարաբերությունների մեջ այն սահմաններում, վոր կորոշվեն Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից հրատարակած հատուկ որենքով։

ՀԱՏՎԱԾ II.

Թեմիական Գործադիր Կոմիտեների իրավասությունը։

51. Կառավարության և հեղափոխական կարգը պահպանելու ընդհանուրում Թեմիական Գործադիր Կոմիտեյին հանձնարարվում է.

ա) աջակցել ընտրական հանձնաժողովներին այն անձանց ցուցակները կազմելիս և ստուգելիս, վորոնք ՎՍԽՀ սահմանադրությունով «բանվորական, գյուղացիական և կարմիր-բանակայինների պատվիրակների Խորհուրդների, Խորհուրդների Համագումարների և Գործադիր Կոմիտեների ընտրությունների մասին» Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրահանգի համաձայն զրկված են ընտրական իրավունքներից.

բ) Թեմիի սահմաններում հանրային խաղաղության պահպանությունը, հանցագործությունների դեմ (անասունների գողություն, ապորինի անտառահատություն, դասալքություն, ստահակություն և այլն) պայքարելը, նույնպես կազմակերպել պայքարի միջոցներ հանցավորների ամեն տեսակի ապաստարանների, վոգելից խմիչքների ապորեն առևտրի և գործածելու դեմ.

գ) հանցանքներ յերևան գալու դեպքում ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, նույն իսկ կալանավորել պատասխանատվության յենթակա անձանց, անհապաղ հաղորդելով սույն մասին շրջանային միլիցիայի վարչությանը.

դ) վերահսկու լինել, վոր ի կատար ածվեն իշխանության կենտրոնական և տեղական մարմինների բոլոր կարգադրությունները և հաղորդել Գավառական Գործադիր Կոմիտեյին սույն կարգադրություններին ցույց ված ընդիմադրության դեպքերի մասին։

յե) վերահասու լինել յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց բաժանելուն վերաբերյալ որենքների կանոնավոր պահպանությանը.

զ) վերահասու լինել ընկերությունների, ժողովների և հասարակական հանդեսների մասին սահմանած կանոնների պահպանությանը։

ե) հսկել, վոր տեղի չունենան սարկացուցիչ գործարքներ և այսպիսի դեպքերի մասին հաղորդել Գավառական Գործադիր Կոմիտեին կամ տեղական Ժողովրդական Դատարանին սահմանած կարգով սույն որինակ գործարքները լուծելու և մեղավորներին պատասխանատվության կոչելու համար.

ը) գրավել ազգաբնակությունը տարբերայի դժբաղդությունների դեմ պայքարելու, մասնավորապես հեղեղների, բույսերին վնասողների և նման այլ դեպքերի դեմ, պահպանելով աշխատանքի վերաբերյալ որենքների պահանջները.

թ) իշխանության վերադաս մարմինների հատուկ կարգադրությամբ պահպանել յերկաթուղային գծերը, փոստ.հեռագրական, հեռախոսական և ելնքարական ցանցերը.

ժ) հոգս տանել կազմակերպելու փոստային և հեռախոսական կապ և ցույց տալ սույն գործին ամեն տեսակի աջակցություն.

ի) տալ քաղաքացիներին անձնավորության և այլ անհրաժեշտ հավատագրեր.

լ) ընդունել և քննել քաղաքացիների ամեն տեսակի հայտարարությունները և իր յեզրակացությամբ ընթացք տալ այնպիսիներին, վորոնք չեն կարող քննության առնվել Թեմիական Գործադիր Կոմիտեի կողմից.

խ) զեկուցում ներկայացնել Գավառական Գործադիր Կոմիտեին պարտադիր վորոշումների խախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին այն դեպքերում, յերբ սույն տույժ նշանակելու իրավունքը չի տրված Թեմիական Գործադիր Կոմիտեներին.

ծ) քաղաքացիական վիճակի ակտերի տոմարագրումը

կ) նշանակել պատշաճ դեպքերում անձանց և բույսի համար խնամակալներ և հոգաբարձուներ.

հ) վավերացնել սորագրություններ, նույնպես և պայմանագրեր ու գործարքներ այն հիմունքներով և այն սահմաններում, վոր

վորոշված են սույն առարկայի վերաբերյալ գոյություն ունեցող հատուկ որենքներով.

ձ) սահմանած ձևով հաշվի առնել ազգաբնակությունը.

ղ) ժողովել Թեմիի դրությանը վերաբերող վիճակագրական և տեղեկատու նյութեր և սույն նյութերը ներկայացնել Գավառական Գործադիր Կոմիտեին.

ճ) աջակցել կազմակերպելու կամավոր վիճակագրական թղթակիցների ցանց.

մ) ցույց տալ որինական աջակցություն բոլոր պաշտոնատար անձանց և իշխանության մարմիններին.

յ) կառավարության և հեղափոխական կարգի պահպանելու բնագավառում բոլոր վերև մատնանշած միջոցները իրագործելիս Թեմիական Գործադիր Կոմիտեն իրավունք ունի պահանջելու միլիցիայի, նույնպես և ազգաբնակության աջակցությունը։

52. Հողային գործի, տնտեսության, առևտրի և բարեկարգության բնագավառում Թեմիական Գործադիր Կոմիտեն.

ա) միջոցներ և ձեռք առնում գործածության մեջ մտցնելու գյուղատնտեսության բարելաված յեղանակները, արտերը մեքենաներով մշակելը, արվեստականորեն պարարտացնելը և այն, նույնպես և լսում է գյուղատնտեսական հիմնարկությունների զեկուցումները.

բ) աջակցում է մելիորատիվ ընկերությունների կազմակերպմանը և Թեմիի սահմաններում հսկում է մելիորատիվ աշխատանքներ կատարելու գործին.

գ) աջակցում է կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման և զարգացմանը և ոգնություն ու ուժանդակություն է ցույց տալիս այն մարմիններին, վոր վարում են սույն աշխատանքը.

դ) աջակցություն է ցույց տալիս գյուղատնտեսության, հողաշինարարական և անասնաբուժական ծառայողներին և հսկում է իշխանության պատշաճ մարմինների հողաշինարարության վերաբերյալ վորոշումների իրագործմանը.

յե) հսկում է, վոր պետական հողային գույքերը ոգտագործվեն նշանակած նպատակի համաձայն և վարում է պետական հողային գույքի հաշվարկությունը և հողային տոմարագրումը.

զ) կազմակերպում է վարձու, բեղմնավորման, անասնաբուժական և այլ կայաններ, նույնպես և նորոգման արհեստանոցներ և հոգս է տանում նրանց բանալու մասին.

Գ. Բ. 14679

Գոս. Գրադարան Գոս. Библиотека ՀՍՍՀ

ե) վարում է տեղական սերմանման ֆոնդերի կազմակերպության գործը, միջնորդություն է հարուցանում սերմանման փոխանակությունների մասին և ղեկավարում է գյուղատնտեսական կամպանիան.

ը) անասունների հիվանդությունների դեմ նախապաշտպանական միջոցներ է ձեռք առնում (կարգադրություն է անում զատելու հիվանդ անասուններին, հրավիրելու անասնաբուժական պաշտոնյաներ, թաղելու վարակիչ հիվանդություններից սատակած անասուններին).

թ) կազմակերպում է պայքար գյուղատնտեսական մշակույթներին ընդհանրների դեմ.

ժ) հսկում է Թեմիի սահմաններում գտնվող պետական և տեղական անտառային տնտեսությունը կանոնավոր վարելու և ազգաբնակչության կարիքների համար փայտեղեն բաց թողնելու կանոնների կատարման վրա.

ի) հսկում է, վոր կատարվեն վորսորդության և ձկնորսության վերաբերյալ սահմանած կանոնները և ժամկետները.

լ) կենտրոնական իշխանության հատուկ հրահանգների հիման վրա մասնակցում է քաղաքացիների մեջ ծագած առանձին հողային վեճերի քննությանը.

խ) աջակցություն է ցույց տալիս ամեն տեսակի կոոպերատիվային կազմակերպությունների զարգացմանը և գործունեությանը.

ծ) ղեկավարում է Թեմիական Գործադիր Կոմիտեյի անորենությունի տակ գտնվող ձեռնարկությունները (դարբնոցները, ջրաղացները և այլն).

կ) արգելում է առևտուր անել առանց պատենտ վերցնելու.

հ) արգելում է առանց պահպանելու սույն առթիվ սահմանած հատուկ կանոնները առևտուր անել հրազենքի նյութերով և ոգելից խմիչքներով.

ձ) պահում է կանոնավոր դրության մեջ տեղական նշանակություն ունեցող ճանապարհները, կամուրջները և լաստանավերը, նույնպես և հսկում է զավառական և համապետական նշանակություն ունեցող այդպիսի կառուցվածքները կանոնավոր պահելու վրա։

ղ) հսկում է շինարարության և հրդեհների վերաբերյալ սահմանած կանոնների կատարելուն.

ճ) ոգնություն է կազմակերպում հանդցնելու անտառային և այլ հրդեհները.

մ) հսկում է գյուղերի առողջապահական դրության վրա և միջոցներ է ձեռք առնում բարելավելու առողջապահական պայմանները.

յ) տամարագրում է հողերի վարձանակալության պայմանագրերը և հետևում է, վոր կնքվող պայմանները համապատասխան լինեն գոյություն ունեցող օրենքներին։

53. Ֆինանսա-հարկային բնագավառում Թեմիական Գործադիր Կոմիտեն.

ա) կազմում է Թեմիական բյուջեն և ներկայացնում է Թեմիական Խորհրդի քննության և Գավառական Գործադիր Կոմիտեյի հաստատությանը, նույնպես և իրագործում է հաստատած բյուջեն և վարում է Թեմիական բյուջեի հաշվապահությունը և հաշվետվությունը.

բ) գործող օրենքների սահմաններում տեղական Թեմիական միջոցների աղբյուրներ է գտնում.

գ) միջոցներ է ձեռք առնում ժողովելու միասնական գյուղատնտեսական հարկը.

դ) Գավառական Գործադիր Կոմիտեյի կարգադրությունը ստանալուց հետո, կազմում է գյուղատնտեսական հարկի յուրաքանչյուր գյուղի հարկատուների ցանկը.

յե) չի թույլ տալիս ծածկելու միասնական գյուղատնտեսական հարկին յենթակա առարկաները, հսկում է գյուղատնտեսական հարկի վերաբերյալ սահմանած արտոնությունները իրագործելու վրա և սույն արտոնությունների անհրաժեշտության մասին առաջադրում է Գավառական Գործադիր Կոմիտեյին.

զ) ժամանակին միասնական գյուղատնտեսական հարկը չվճարելու դեպքում միջոցներ է ձեռք առնում գանձելու տույժը և տուգանքը.

ե) աջակցություն է ցույց տալիս զբաղմունքային հարկը գանձելու գործում.

ը) հաշվի է առնում յեկամտային-ստացվածքային հարկ վճարողներին, նույնպես և հաշվի յե առնում ու ստուգում է Թեմիի առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունները.

թ) միջոցներ է ձեռք առնում Թեմիի շրջանում ժամանակին ժողովելու պետական և տեղական հարկերը և Գավառական Գործադիր Կոմիտեյի հանձնարարությամբ գանձում է հարկերի և տուրքերի ապառքները.

ժ) արգելում է որենքով չսահմանած հարկերի և տուրքերի գանձումը.

ը) մասնակցում է, յերբ ապահովագրական գործակալները գնահատում են շինությունները, աջակցում է ապահովագրական տուրքը ժողովելիս և մասնակցում է հրդեհից առաջացած վնասի գնահատությանը։

54. Զինվորական բնագավառում Թեմական Գործադիր Կոմիտեյին հանձնարարվում է.

ա) բոլոր զինապարտ քաղաքացիների հաշվարկությունը.

բ) ձիերի կազմի, սայլերի, լծասարքի հաշվարկությունը, համաձայն սույն առարկայի մասին գոյություն ունեցող հատուկ որենքների և կանոնների.

գ) աջակցություն ցույց տալ իրագործելու աշխատավորների ընդհանուր զինավարժման վերաբերյալ բոլոր կարգադրությունները.

դ) զինվորական գերատեսչության մարմինների ցուցմունքներով իրագործել հերթական և զորաժողովի զինակոչերը.

յե) հսկել, վոր զինապարտ քաղաքացիները ճշտապես ներկայանան ստուգման զորահավաքներին։

զ) անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել դասալքության նկատմամբ։

է) տեղավորել և կացարաններ հատկացնել անցնող զինվորական մասերին և զինվորական հիմնարկություններին.

ը) հրապարակել Թեմի ազգաբնակության համար տեղեկություններ այն արտոնությունների մասին, վոր տրվում է քաղաքացիներին զինակոչի ժամանակ, նույնպես և այն մասին, թե ինչ վավերաթղթեր են անհրաժեշտ ընտանեկան դրության պատճառով արտոնություն ստանալու համար.

55. Աշխատանքի բնագավառում Թեմական Գործադիր Կոմիտեն.

ա) իր տերրիտորիայի սահմաններում հսկում է, վոր ժամանակին և ճշտորեն կատարվեն աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող որենքները և իշխանության կենտրոնական մարմինների աշխատանքի մասին կարգադրությունները.

բ) աջակցություն է ցույց տալիս արհեստակցական կազմակերպությունների գործունեությանը.

56. կուլտուր-կրթական և առողջապահության բնագավառում Թեմական Գործադիր Կոմիտեն.

ա) միջոցներ է ձեռք առնում զարգացնելու դպրոցական և մինչդպրոցական ցանցը և ըստ կարելույն ոգնություն է հատցնում ուսումնարաններին.

բ) միջոցներ է անց կացնում կյանքի մեջ պայքարելու անգրագիտության դեմ.

գ) կազմակերպում է խրճիթ-ընթերցարաններ, դրադարաններ, միջոցներ է ձեռք առնում տարածելու ազգաբնակության մեջ խորհրդային հրատարակությունները (լրագիրներ, հանդեսներ, գրքեր և այլն), վորոնց թվում տեղական ազգային փոքրամասնությունների լեզուներով, նույնպես և աջակցություն է ցույց տալիս գյուղական թղթակիցներին.

դ) կազմակերպում է գյուղական բժշկա-սանիտարական հիմնարկություններ.

յե) միջոցներ է ձեռք առնում կանխելու վարակիչ հիվանդությունները և կազմակերպում է նրանց դեմ պայքար.

զ) միջոցներ է ձեռք առնում տարածելու ազգաբնակության մեջ սանիտարա-կրթական գիտելիքներ.

է) պայքարում է ջառահների դեմ.

ը) գեկուցումներ է լսում կուլտուր-կրթական և բժշկա-սանիտարական հիմնարկությունների գործունեության մասին.

թ) աջակցություն է ցույց տալիս ուսուցչական և բժշկական պաշտոնյաներին.

ժ) աջակցություն է ցույց տալիս հնության և արվեստի մնացորդները պահպանելու գործում։

57. Սոցիալական ապահովության բնագավառում Թեմական Գործադիր Կոմիտեն

ա) ամեն տեսակ աջակցություն է ցույց տալիս գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերություններին և հսկում է նրանց գործունեությանը.

բ) գոյություն ունեցող որենքների և կանոնների համաձայն, ոգնություն է հատցնում հաշմանդամներին, կարմիր զինվորների ընտանիքներին, ռազմաճակատում մեռած անձանց ընտանիքներին, զորացրման յենթարկվածներին և նրանց ընտանիքներին, նույնպես և աջակցում է հաշմանդամների արտելների կազմակերպությանը և գործունեությանը.

գ) կազմակերպում է ոգնություն թույլ անտեսություններին,

մասնավորապես կոլլեկտիվ ոգնության միջոցներով (համայնական վարուցանքս, հունձ, բերքի հավաքելը և այլն)։

58. Դատաստանա-քննչական ընագավառում Թեմական Գործադիր Կոմիտեն.

ա) աջակցություն է ցույց տալիս դատաստանա-քննչական մարմիններին նրանց հանձնարարած նպատակները իրագործելու ասպարիզում.

բ) սահմանած կարգով ներկայացնում է Գավառական Գործադիր Կոմիտեյի հաստատությանը ժողովրդական տեսչակների ցուցակները.

գ) աջակցում է ազգաբնակությանը իրավաբանական ոգնություն կազմակերպելու գործում։

ՀԱՏՎԱԾ III.

Թեմական Գործադիր Կոմիտեների կազմակերպությունը։

59. Թեմական Գործադիր Կոմիտեն ընտրվում է Թեմական Խորհրդի կողմից մի տարի ժամանակով և նիստերի յե գումարվում առնվազն շաբաթը մի անգամ։

60. Թեմական Գործադիր Կոմիտեն ընտրվում է հետևյալ կազմով՝ նախագահ և յերկու անդամ, նույնպես և թեկնածուներ։

Ծանոթություն.—Գավառական Գործադիր Կոմիտեն կարող է Թեմական Գործադիր Կոմիտեյի անդամների թիվը հասցնել 5-ի, աչքի առաջ ունենալով Թեմի տարածության և ազգաբնակության չափը։

61. Թեմի Գործադիր Կոմիտեյի նիստերին, նրա թույլտվությամբ, կարող են մասնակցել Թեմի տերրիտորիայի վրա գտնվող Թեմական Գործադիր Կոմիտեյին վոչ յենթական պետական հիմնարկությունների, կոոպերատիվային և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները և ղեկավարները, նույնպես և կանանց ներկայացուցչական ժողովների ներկայացուցիչները։ Այն հարցերի նկատմամբ, վոր շոշափում են մասնանշած հիմնարկությունների և կազմակերպությունների շահերը, նրանց ներկայացուցիչները վայելում են խորհրդակցական ձայնի իրավունք։

62. Թեմական Գործադիր Կոմիտեյի աշխատանքը բաժանվում է նրա անդամների մեջ։

63. Իբրև ընդհանուր կանոն, Թեմական Գործադիր Կոմիտեյին առընթեր չեն կազմակերպվում բաժիններ. բացառիկ դեպքերում բաժինները կազմակերպվում են Գավառական Գործադիր Կոմիտեյի թույլտվությամբ։

64. Թեմական Գործադիր Կոմիտեյին առընթեր կազմակերպվում է դիվանատուն և ֆինանսա—հարկային մասը։ Դիվանատան ղեկավարն է Թեմական Գործադիր Կոմիտեյի քարտուղարը։

65. Թեմական Գործադիր Կոմիտեյի պաշտոնեության կազմը հաստատում է Գավառական Գործադիր Կոմիտեն։

66. Թեմական Գործադիր Կոմիտեյի գործավարության և հաշվետվության կարգը սահմանվում են Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի առանձին հրահանգով։

67. Թեմական Գործադիր Կոմիտեյի բոլոր նիստերը արձանագրվում են։

ՀԱՏՎԱԾ IV.

Թեմական Գործադիր Կոմիտեյի նախագահի յեվ անդամների իրավունքները յեվ պարտականությունները։

68. Թեմական Գործադիր Կոմիտեյի այս կամ այն վորոշումը և վերադաս մարմինների կարգադրությունները կյանքի մեջ անցկացնելու համար Թեմական Գործադիր Կոմիտեյի նախագահը ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ գործնական միջոցները, վոր պարտադիր են Թեմի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր հիմնարկությունների, ձեռնարկությունների և անձանց համար. ձեռք առած միջոցների մասին նա հաղորդում է Թեմական Գործադիր Կոմիտեյի առաջիկա նիստին։

69 Թեմական Գործադիր Կոմիտեյի բոլոր անդամները պարտավոր են հաճախել Թեմական Գործադիր Կոմիտեյի նիստերը և չեն կարող հրաժարվել Թեմական Գործադիր Կոմիտեյի կողմից հանձնարարած պարտականությունները կատարելուց։

70. Թեմական Գործադիր Կոմիտեյի նախագահը և անդամները առանց Թեմական Խորհրդի և Գավառական Գործադիր Կոմիտեյի գիտության ու համաձայնության չեն կարող թողնել իրենց պաշտոնը ու աշխատանքը։

71. Թեմիական Գործադիր Կոմիտեյի անդամները կարող են գործել Թեմիական Խորհուրդի անունից, ստանալով յուրաքանչյուր առանձին դեպքի համար Թեմիական Գործադիր Կոմիտեյի լիազորությունը։

72. Առանց հարգելի պատճառի Թեմիական Գործադիր Կոմիտեյի նիստերը յերեք անդամ չհաճախելու դեպքում նրա անդամները Թեմիական Գործադիր Կոմիտեյի կողմից կարող են յենթարկվել կարգապահական պատժի։ Սույն դեպքերում կարգապահական պատժի միջոցներն են՝ նախազգուշացումը և հանդիմանումը։

73. Թեմիական Գործադիր Կոմիտեյի քարտուղարին հաստատում է Գավառական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։

Ծանոթություն.—Թեսիական Գործադիր Կոմիտեյի քարտուղարը կարող է և չլինել Թեմիական Գործադիր Կոմիտեյի անդամ։

Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝ Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝ Ս. ԹՈՌՐԻՍ.

Թիֆլիս—Գալատ։
1925 թ. հուլիսի 16-ին

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ Գ...
Հ.Ս.Հ.Հ. Публичная Б...
7/31. 1922
Տեսակ. Անհրաժ...
Ս. ՄԱՍԻ ԻՑԱՆԻ Ա...

«Ազգային գրադարան»
NL0219605

40. 264